



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. ապրիլին /վերլուծություն/

2006թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9605 գործարքներ, որոնց քանակը 2006թ. մարտի և 2005թ. ապրիլի համեմատ նվազել է համապատասխանաբար 23.7%-ով և 5.3%-ով:

2006թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3963 օտարման գործարքների 82.4%-ը կազմել են առուվաճառքները, 16.2%-ը՝ նվիրատվությունները և

1.4%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.1%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 37.0%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2006թ. ապրիլին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2006թ. մարտի համեմատ նվազել է 8.8%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ աճել՝ 4.0%-ով:

2006թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.1%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. մարտի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.2%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 10.9%-ով:

2006թ. ապրիլին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2006թ. ապրիլին համարժեք է 449.2դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. ապրիլին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		ապրիլ 2005թ.	ապրիլ 2006թ.	մարտ 2006թ.
Կենտրոն	157500.0-540100.0	264300.0	366100.0	361900.0
Արաբկիր	112500.0-405100.0	224200.0	289800.0	281200.0
Քանաքեռ-Զեյթուն	90000.0-270100.0	134700.0	175100.0	173800.0
Նոր-Նորք	90000.0-225100.0	120900.0	164000.0	161500.0
Ավան	99000.0-180000.0	114700.0	146000.0	143100.0
Էրեբունի	90000.0-225100.0	107700.0	144100.0	139500.0
Շենգավիթ	90000.0-202500.0	132200.0	173400.0	173000.0
Դավթաշեն	90000.0-225100.0	134800.0	179800.0	178300.0
Աջափնյակ	90000.0-225100.0	127700.0	164100.0	161400.0
Մալաթիա-Սեբաստիա	90000.0-202500.0	125600.0	161400.0	158500.0
Նուբարաշեն	58500.0-135000.0	56000.0	103700.0	101400.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>58500.0-540100.0</b>	<b>140300.0</b>	<b>188000.0</b>	<b>184900.0</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. ապրիլին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.7%:

2006թ. ապրիլին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 413 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. մարտի համեմատ նվազել է 21.9%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ աճել՝ 2.7%-ով:

2006թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. ապրիլին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			ապրիլ 2005թ.	ապրիլ 2006թ.	մարտ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	35900.0-71900.0	41300.0	59900.0	58700.0

	Ապարան	13500.0-31400.0	18800.0	25100.0	24700.0
	Թալին	11200.0-33700.0	17500.0	23200.0	23300.0
Արարատ	Արտաշատ	24700.0-67400.0	32900.0	44400.0	43700.0
	Մասիս	35900.0-67400.0	35800.0	54000.0	53400.0
	Վեդի	22500.0-47200.0	20200.0	37500.0	37200.0
	Արարատ	20200.0-47200.0	23400.0	39300.0	38600.0
Արմավիր	Վաղարշապատ	49400.0-112300.0	67400.0	78700.0	77800.0
	Արմավիր	27000.0-58400.0	36500.0	50200.0	49100.0
	Մեծամոր	18000.0-44900.0	19300.0	33700.0	31600.0
Գեղարքունիք	Սևան	18000.0-40400.0	20500.0	33200.0	32900.0
	Գավառ	13500.0-35900.0	16800.0	24900.0	24100.0
	Մարտունի	22500.0-67400.0	18800.0	38400.0	37700.0
	Վարդենիս	9000.0-29200.0	10800.0	19800.0	19900.0
	Ճամբարակ	5800.0-22500.0	9000.0	13500.0	13600.0
Լոռի	Վանաձոր	27000.0-89800.0	33100.0	47400.0	44000.0
	Ստեփանավան	15700.0-33700.0	20600.0	24200.0	23400.0
	Սյիտակ	18000.0-44900.0	22400.0	32800.0	31600.0
	Ալավերդի	9000.0-31400.0	12100.0	20400.0	19600.0
	Տաշիր	11200.0-29200.0	16600.0	19800.0	19900.0
	Թումանյան	4000.0-11200.0	4900.0	5200.0	5200.0
	Շամլուղ	2200.0-8300.0	2700.0	2700.0	2800.0
Ախթալա	6700.0-16000.0	10100.0	10300.0	10300.0	
Կոտայք	Արովյան	58400.0-112300.0	60500.0	88900.0	87600.0
	Նոր Հաճն	40400.0-71900.0	42600.0	60400.0	58900.0
	Բյուրեղավան	22500.0-56200.0	29100.0	42100.0	40300.0
	Եղվարդ	31400.0-62900.0	35900.0	55300.0	54300.0
	Հրազդան	20200.0-44900.0	24300.0	34500.0	34700.0
	Ծաղկաձոր	18000.0-80900.0	49000.0	70500.0	70000.0
	Չարենցավան	24700.0-44900.0	27000.0	38400.0	38600.0
Շիրակ	Գյումրի	27000.0-89800.0	35700.0	47300.0	46600.0
	Արթիկ	15700.0-38200.0	19800.0	30300.0	29100.0
	Մարալիկ	8100.0-31400.0	15700.0	21600.0	21700.0
Սյունիք	Գորիս	22500.0-58400.0	30900.0	50500.0	49900.0
	Կապան	22500.0-47200.0	26000.0	38600.0	38300.0
	Սիսիան	18000.0-42700.0	23400.0	31600.0	30900.0
	Մեղրի	13500.0-33700.0	17900.0	25300.0	24600.0
	Ագարակ	9000.0-27000.0	13500.0	19000.0	18600.0
	Քաջարան	9000.0-31400.0	12100.0	22600.0	22800.0
	Դաստակերտ	4500.0-11200.0	6300.0	6300.0	6400.0
Վայոց Ձոր	Վայք	13500.0-42700.0	20600.0	32900.0	31700.0
	Եղեգնաձոր	24700.0-58400.0	32800.0	51400.0	49900.0
	Ջերմուկ	35900.0-89800.0	37000.0	58600.0	57500.0
Տավուշ	Դիլիջան	18000.0-49400.0	26700.0	39900.0	39200.0
	Իջևան	27000.0-71900.0	32300.0	48300.0	47600.0
	Բերդ	18000.0-44900.0	22500.0	29000.0	28200.0
	Նոյեմբերյան	9000.0-22500.0	12400.0	15500.0	15100.0

2006թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.9%:

2006թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 413 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 120, մյուս մարզերում միասին վերցրած՝ 293: 2006թ. մարտի համեմատ անհատական բնակելի

տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.4%-ով, ընդ որում Երևանում աճել՝ 2.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 22.3%-ով: 2005թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.2%-ով, ընդ որում Երևանում՝ 0.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 10.9%-ով:

2006թ. ապրիլին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. ապրիլին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
		ապրիլ 2005թ.	ապրիլ 2006թ.	մարտ 2006թ.
Կենտրոն	135000.0-900200.0	286800.0	382500.0	375600.0
Արաբկիր	90000.0-450100.0	225600.0	296800.0	293700.0
Քանաքեռ-Զեյթուն	67500.0-270100.0	136300.0	178700.0	176200.0
Նորք-Մարաշ	90000.0-450100.0	162300.0	186500.0	186000.0
Ավան	90000.0-360100.0	115900.0	149200.0	147500.0
Էրեբունի	67500.0-225100.0	109200.0	146800.0	144000.0
Շենգավիթ	67500.0-202500.0	133900.0	177100.0	176400.0
Դավթաշեն	90000.0-405100.0	137700.0	182500.0	181000.0
Աջափնյակ	67500.0-270100.0	129300.0	166900.0	165400.0
Մալաթիա-Սեբաստիա	67500.0-405100.0	127400.0	164300.0	161100.0
Նուբարաշեն	40500.0-135000.0	57600.0	106100.0	103900.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>40500.0-900200.0</b>	<b>147500.0</b>	<b>194300.0</b>	<b>191900.0</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսեկան աճը կազմել է 1.3%:

2006թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. ապրիլին /ՀՀ դրամ/	Միջին գները /ՀՀ դրամ/		
			ապրիլ 2005թ.	ապրիլ 2006թ.	մարտ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	27000.0-80900.0	44300.0	63800.0	60600.0
	Ապարան	13500.0-35900.0	19600.0	26100.0	26000.0
	Թալին	13500.0-35900.1	18100.0	24600.0	24700.0
Արարատ	Արտաշատ	22500.0-62900.0	33500.0	45600.0	45100.0
	Մասիս	22500.0-67400.0	36500.0	55200.0	54400.0
	Վեդի	22500.0-49400.0	22600.0	38700.0	38200.0
	Արարատ	22500.0-53900.0	24200.0	40300.0	39600.0
Արմավիր	Վաղարշապատ	35900.0-112300.0	68400.0	80000.0	78700.0
	Արմավիր	22500.0-67400.0	37200.0	51300.0	50000.0

Գեղարքունիք	Սևան	18000.0-53900.0	21900.0	38000.0	38200.0
	Գավառ	9000.0-38200.0	18600.0	26200.0	25200.0
	Մարտունի	13500.0-49400.0	20400.0	39400.0	38600.0
	Վարդենիս	9000.0-31400.0	12400.0	21400.0	21500.0
	Ճամբարակ	4500.0-24700.0	10900.0	14900.0	14800.0
Լոռի	Վանաձոր	22500.0-89800.0	33900.0	49100.0	45200.0
	Ստեփանավան	13500.0-40400.0	26100.0	26700.0	26800.0
	Սպիտակ	13500.0-42700.0	23200.0	34100.0	33200.0
	Ալավերդի	9000.0-31400.0	13400.0	21700.0	20800.0
	Տաշիր	9000.0-31400.1	17200.0	21300.0	21400.0
	Թումանյան	4500.0-1800.0	6300.0	6800.0	6900.0
	Շամլուղ	2200.0-13500.0	4000.0	4300.0	4300.0
	Ախթալա	9000.0-22500.0	10900.0	11900.0	11900.0
Կոտայք	Արովյան	31400.0-112300.0	61000.0	90300.0	89700.0
	Նոր Հաճն	18000.0-76400.0	44000.0	61300.0	60000.0
	Բյուրեղավան	18000.0-67400.0	29800.0	43300.0	41200.0
	Եղվարդ	22500.0-71900.0	36800.0	56400.0	55800.0
	Հրազդան	18000.0-53900.0	26200.0	35900.0	36100.0
	Ծաղկաձոր	35900.0-112300.0	51700.0	71700.0	70900.0
	Չարենցավան	18000.0-49400.0	28400.0	39400.0	39600.0
Շիրակ	Գյումրի	27000.0-89800.0	41400.0	48900.0	47700.0
	Արթիկ	9000.0-42700.0	20700.0	31400.0	30300.0
	Մարալիկ	13500.0-35900.0	16300.0	23400.0	23500.0
Սյունիք	Գորիս	18000.0-58400.0	31400.0	51500.0	51700.0
	Կապան	13500.0-49400.0	26800.0	39600.0	39800.0
	Սիսիան	13500.0-42700.0	21400.0	32900.0	32300.0
	Մեղրի	13500.0-42700.0	18500.0	27000.0	26500.0
	Ագարակ	9000.0-35900.0	14200.0	21000.0	21100.0
	Դաստակերտ	4500.0-18000.0	7400.0	8600.0	8700.0
Վայոց Ձոր	Վայք	13500.0-44900.0	21500.0	34000.0	33100.0
	Եղեգնաձոր	18000.0-71900.0	33600.0	52400.0	51200.0
	Ջերմուկ	13500.0-47200.0	27100.0	35400.0	34400.0
Տավուշ	Դիլիջան	18000.0-58400.0	30700.0	40900.0	40200.0
	Իջևան	18000.0-58400.0	33000.0	49500.0	49700.0
	Բերդ	13500.0-44900.0	23000.0	30600.0	29100.0
	Նոյեմբերյան	9000.0-31400.0	13900.0	16800.0	15900.0

2006թ. ապրիլին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսեկան աճը կազմել է 1.8%:

Ընդհանուր առմամբ, 2006թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 941.15 հա /այդ թվում՝ 13.92 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 860.53 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 902.34 հա /այդ թվում՝ 13.19 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 829.50 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 33.97 հա /այդ թվում՝ 0.05 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 27.08 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 4.85 հա /այդ թվում՝ 0.68 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 3.95 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 536.61 հա, որից 528.84 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2006թ. ապրիլին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանառության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանառության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	5	0.20	23	4.17	0	0.00	58	4.96	16	1.44
Արագածոտն	30	31.28	0	0.00	5	0.73	64	36.94	45	4.56	1	0.01
Արարատ	11	25.13	46	3.96	16	0.35	83	52.06	75	6.75	1	0.06
Արմավիր	33	334.75	3	0.28	1	0.01	110	194.09	50	4.86	9	1.16
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	7	1.70	17	20.98	13	1.26	5	0.12
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	13	6.22	10	1.17	4	0.02
Կոտայք	5	7.20	1	0.22	7	1.88	120	45.87	117	11.49	5	0.74
Շիրակ	3	1.48	13	0.38	22	0.83	24	26.88	9	1.15	1	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	25	1.50	20	24.37	5	0.44	2	0.03
Վայոց Ձոր	5	4.17	0	0.00	10	1.98	2	0.18	6	0.60	1	0.003
Տավուշ	0	0.00	0	0.00	4	0.31	61	17.91	11	0.83	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>87</b>	<b>404.01</b>	<b>68</b>	<b>5.04</b>	<b>120</b>	<b>13.46</b>	<b>514</b>	<b>425.50</b>	<b>399</b>	<b>38.07</b>	<b>45</b>	<b>3.59</b>

2006թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են 1267 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2005թ. ապրիլին՝ 1244/ այդ թվում՝ 601-ը՝ գյուղատնտեսական նշանակության /694/, 632-ը՝ բնակավայրերի /544/, 32-ը՝ արդյունաբերական օբյեկտների /6/, 2-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2006թ. ապրիլին հողերի առուվաճառքներից 227 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2005թ. ապրիլին՝ 321/, բոլորը՝ /417.06 հա/ մյուս մարզերում /310/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 87 միավորը /404.00 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2005թ ապրիլին՝ 222/, 63-ը՝ /4.84 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /71/, 69-ը՝ /5.73 հա/ հասարակական կառուցապատման /27/, 8-ը՝ /2.48 հա/ արդյունաբերական օբյեկտների /1/ հողեր:

2006թ. ապրիլին հանրապետությունում արձանագրված 601 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 87 իրականացվել են աճուրդների, 10՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	28	27.28	285.2	6630.2	1244.3	45	16.80	359.4	6738.0	2192.1
Ապարան						5	6.00	89.8	763.6	309.9
Թալին	2	4.00	38.2	44.9	40.4	11	12.17	89.8	754.7	301.0
Ծաղկահովիտ						2	1.42	76.4	943.3	134.8
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	10	24.88	67.4	712.0	301.0	29	29.36	332.4	5390.4	1138.7
Մասիս						24	10.81	179.7	6738.0	1522.8
Վեդի	1	0.25	60.6	60.6	60.6	25	10.85	202.1	4492.0	934.3
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	1	0.40	1087.1	1087.1	1087.1	20	38.14	292.0	4042.8	741.2
Բաղրամյան	15	280.50	33.7	35.9	35.0	8	35.46	89.8	673.8	458.2
Վաղարշապատ	17	53.85	31.4	837.8	143.7	79	115.40	440.2	8984.0	1280.2
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								188.7	494.1	309.9
Ճամբարակ						7	7.85	44.9	539.0	125.8
Մարտունի								44.9	1796.8	444.7
Սևան								44.9	449.2	172.9
Վարդենիս						10	13.13	27.0	530.1	193.2
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						4	1.35	161.7	2470.6	341.4
Գուգարք								224.6	2695.2	853.5
Սպիտակ						2	0.28	224.6	1482.4	467.2
Ստեփանավան						7	4.59	89.8	2246.0	318.9
Տաշիր								44.9	449.2	184.2
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	5	7.20	47.2	840.0	226.8	59	24.09	269.5	11230.0	2883.9
Եղվարդ						53	20.01	170.7	11230.0	1998.9
Հրազդան						7	1.18	112.3	2695.2	696.3
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						6	8.00	247.1	1684.5	388.6
Ամասիա						3	4.49	35.9	235.8	98.8
Անի								107.8	359.4	193.2
Աշոցք						2	5.14	44.9	112.3	98.8
Արթիկ	3	1.48	105.6	345.9	262.8	13	9.25	62.9	1078.1	157.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						5	11.55	89.8	718.7	283.0
Կապան								53.9	898.4	206.6
Մեղրի						1	0.38	179.7	1904.6	404.3
Սիսիան						14	12.43	44.9	673.8	157.2
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	4	3.17	35.9	305.5	103.3	2	0.18	116.8	2695.2	1158.9
Վայք	1	1.00	35.9	35.9	35.9			53.9	1527.3	458.2
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						27	5.78	44.9	898.4	305.5
Իջևան						1	0.16	238.1	1796.8	741.2
Նոյեմբերյան						33	11.97	44.9	3746.3	431.2

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2006թ. ապրիլին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 404 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 63-ը իրականացվել են աճուրդների և 5-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						41	40810.0	112.3	3593.6	1913.6
Ապարան						2	2360.0	112.3	628.9	157.2
Թալին						1	510.0	44.9	359.4	67.4
Ծաղկահովիտ								44.9	359.4	62.9
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	13	13215.0	143.7	426.7	316.7	12	12810.0	134.8	2695.2	700.8
Մասիս	33	26400.0	633.4	664.8	651.3	36	28040.0	134.8	8984.0	916.4
Վեդի						25	25218.0	112.3	988.2	512.1
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	3	2800.0	238.1	244.8	240.3	16	16017.0	134.8	2246.0	889.4
Բաղրամյան						1	1200.0	80.9	269.5	112.3
Վաղարշապատ						33	31411.0	134.8	4492.0	1190.4
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	600.0	134.8	898.4	301.0
Ճամբարակ						2	2736.0	44.9	134.8	71.9
Մարտունի						5	4820.0	89.8	449.2	179.7
Սևան						2	1965.0	89.8	898.4	116.8
Վարդենիս						3	2496.0	44.9	224.6	80.9
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						2	4460.0	67.4	269.5	98.8
Գուգարք						2	1077.0	67.4	2335.8	485.1
Սպիտակ						2	1950.0	62.9	449.2	98.8
Ստեփանավան						3	3160.0	44.9	269.5	80.9
Տաշիր								44.9	134.8	60.6
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	1	2200.0	422.2	422.2	422.2	52	50325.0	134.8	6738.0	1424.0
Եղվարդ						58	58960.0	134.8	6738.0	1612.6
Հրազդան						7	5620.0	134.8	8984.0	1019.7
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	13	3790.0	750.2	2124.7	1343.1	6	5465.0	112.3	1527.3	260.5
Ամասիա								44.9	134.8	60.6
Անի						1	2180.0	67.4	179.7	83.1
Աշոցք								40.4	134.8	53.9
Արթիկ						2	3869.0	67.4	920.9	121.3
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								67.4	539.0	202.1



Կապան								67.4	628.9	184.2
Մեղրի						3	2110.0	67.4	404.3	107.8
Միսիան						2	2310.0	67.4	404.3	116.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						6	5960.0	67.4	1123.0	224.6
Վայք								76.4	628.9	101.1
Տավուշի մարզ										
Բերդ								44.9	628.9	76.4
Իջևան						7	4291.0	67.4	1347.6	327.9
Նոյեմբերյան						3	3600.0	44.9	628.9	98.8

2006թ. ապրիլին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 12 գործարքներ՝ 2.67 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ Արարատի /1.25 հա/, 2-ը՝ Գեղարքունիքի /1.00 հա/, 1-ը՝ Լոռու /0.03 հա/ և 1-ը՝ Սյունիքի /0.39 հա/ մարզերում:

2006թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 764 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.0%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 34.6%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2006թ. մարտի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 12.3%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 24.4%-ով:

2006թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 42 բնակարանների, 17 անհատական բնակելի տների, 242 հասարակական, 33 արտադրական նշանակության օբյեկտների, 423 միավոր հողերի, 7 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների քանակը 2006թ. մարտի և 2005թ. ապրիլի համեմատ նվազել է 39.4-ական%-ով:

2006թ. ապրիլին հանրապետությունում վարձակալվել են 1205.66 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 4.06 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1093.50 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 15.40 հա բնակավայրերի, 70.12 հա արդյունաբերական օբյեկտների, 22.27 հա հատուկ պահպանվող տարածքների, 0.30 հա տրանսպորտի օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 546.16 հա, որից 528.41 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 1.58 հա գյուղատնտեսական նշանակության, Վայոց Ձորի մարզում:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 529.83 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. ապրիլին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	32	109.09
Արարատ	0	0.00	5	9.95
Արմավիր	0	0.00	19	34.02
Գեղարքունիք	8	483.60	21	44.81
Լոռի	0	0.00	104	303.87

Կոտայք	0	0.00	12	10.22
Շիրակ	2	45.00	17	41.37
Սյունիք	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	2	1.23	3	0.35
Տավուշ	0	0.00	2	10.00
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>529.83</b>	<b>215</b>	<b>563.68</b>

2006թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1005 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. մարտի համեմատ նվազել է 11.5%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ աճել՝ 5.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /53.2%/, առանձնատների /16.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.2%/ և հողերի /12.4%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 549 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. մարտի համեմատ նվազել է 8.0%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ աճել՝ 36.6%-ով:

2006թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 169.87 հա /այդ թվում 0.62 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 167.00 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 99.37 հա, որից 98.43 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.10 հա, բնակավայրերի հողեր, Վայոց Ձորի մարզում:

2006թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 26 և 54 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.8%: 2006թ. մարտի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 8.0%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ աճել՝ 3.3 անգամ: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում՝ 50.0%:

2006թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1682 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. մարտի համեմատ նվազել է 26.9%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 4.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.9%/:

### **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**